

2026

ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ

Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱ 11

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ  
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝  
«ԶԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան  
ՀՀ ք. Երևան Սևանի 5  
Հեռ. բջջ. +374 99 994222  
galoyan.aram@gmail.com



ՀԱՍՄԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ  
Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ ԱՐԵՄԿՈՒՆՑԱՅ ՊՈՂՈՏԱ 11

ՇՐՋԱԿԱ ՍԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԶԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ տնօրեն՝

Կ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՍ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2026

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	5
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	5
1.2	Հապավումներ .....	5
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը .....	6
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը .....	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) .....	10
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր.....</i>	10
1.5.2	<i>Քանդման աշխատանքներ.....</i>	11
1.5.3	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր.....</i>	12
1.5.4	<i>Ջրամատակարարում և ջրահեռացում.....</i>	14
1.5.5	<i>Ջեռուցում. Օդափոխություն.....</i>	16
1.5.6	<i>Էլ. մատակարարում.....</i>	16
1.5.7	<i>Գազամատակարարում.....</i>	17
1.5.8	<i>Էներգախնայողության միջոցառումներ.....</i>	18
1.5.9	<i>Կանաչապատման աշխատանքներ.....</i>	18
1.5.10	<i>Կանաչ տարածքի ռոտզման ջրապահանջի հաշվարկ.....</i>	19
1.6	Աղմուկ և թրթռում:.....	20
1.6.1	Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ.....	23
1.6.2	Գլխավոր հատակագիծ.....	25
1.6.3	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց .....	27
1.6.4	Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ.....	28
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ .....	29
2.1	Աշխատանքների կատարման սխեմա.....	30
	Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են .....	31
2.2	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը .....	32
	QTZ 63 H5013A .....	32
2.3	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	33
2.3.1	<i>Նյութերի և բնառեսուրսների օգտագործում .....</i>	33
3.	ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ .....	35
3.1	Ջրային ցանց .....	35
3.2	Երկրաբանական կառուցվածքը:.....	35
3.3	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը.....	36
3.4	Կլիման .....	37
3.5	Օդային ավազան.....	39

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ).....	43
3.6 Ջրային ռեսուրսներ .....	43
3.7 Հողերի նկարագիրը .....	44
3.8 Հողային ռեսուրսներ .....	44
3.9 Բուսական աշխարհ .....	44
3.10 Կենդանական աշխարհ .....	45
3.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	45
3.12 Պատմամշակութային հուշարձաններ.....	46
3.13 Թափոնների կառավարում .....	75
3.14 Սոցիոլական գործոն .....	77
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	78
4.1 Ռիսկերի գնահատում .....	78
4.2 Արտանետումների աղբյուրները .....	79
4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	79
4.3.1 Քանդման աշխատանքներ.....	79
4.3.2 Մթնոլորտային օդ.....	79
4.3.3 Ջրային ռեսուրսներ.....	80
4.3.4 Հողային ռեսուրսներ .....	80
4.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	81
4.3.6 Հակահրդեհային միջոցառումներ.....	81
4.3.7 Աղմուկ և թրթռում.....	82
4.3.8 Թափոնների կառավարում.....	82
4.3.9 Տարածքի բարեկարգում կանաչապատում.....	83
4.3.10 Կազմակերպչատեխնիկական միջոցառումներն անբարենպաստ կլիմայական պայմանների դեպքում /շահագործման փուլ/.....	83
5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....	84
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ .....	85
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	88
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	93
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	94

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

Ձեռնարկող՝	«ԶԵԹ ԻՔՍ ԳԱՐԱԺ» ՍՊԸ
Իրավաբանական հասե՝	ՀՀ ք. Երևան, Կենտրոն Արշակունյաց պողոտա 11
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ ք. Երևան, Կենտրոն Արշակունյաց պողոտա 11
ՇՄԱԳ հաշվետվության կազմող՝	Ա/Զ Արամ Գալոյան, հեռ. +374 99994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հասարակական նշանակության շենք:

Հասարակական նշանակության շենքի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ ք. Երևան, Կենտրոն Արշակունյաց պողոտա 11 հասցեում:

Հասարակական նշանակության շենք կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Հասարակական նշանակության շենքի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության վերաբերյալ Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության

մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Քաղաք Երևան, Կենտրոն Արշակունյաց պողոտա 11 հասցեում նախատեսվող հասարակական նշանակության շենք կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

**ՀՀ Սահմանադրություն** (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք** (2023թ.) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրության փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

**«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք** ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները: **«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը

սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

**ՀՀ ջրային օրենսգրք 2002թ.** - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

**«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը** (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

**«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)** - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները:

2003

թվականի

հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

**«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք** (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք** (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

**«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք** (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին



տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

*«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.*

*«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.*

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,*

*«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը*

*«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),* որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

*ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում,* որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

*ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N 191-Ն որոշում:*

*ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:*

*ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:*

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադինամիկության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ:

ՀՀ Կառավարություն 8 փետրվարի 2018 թվականի N 108-Ն որոշումով «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

**1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

#### 1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Հասարակական նշանակության շենքի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ՀՀ ք. Երևան, Կենտրոն Արշակունյաց պողոտա 11 հասցեում:

Հողատարածքի բնութագրերը՝

Կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0317-0040

- Մակերեսի չափը (հա)՝ 0. 1 7 7 7 1

- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման

- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողակտորը ծանրաբեռնված է հետևյալ շինություններով՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-006-0317-0040-001	Առևտրի և ավտոտեխսպասարկման համալիր	752.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-006-0317-0040-002	պարիսպ	30.1 քմ, 90.3 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գոյություն ունեցող շինությունները ենթակա են ապամոնտաժման:

Հողամասը ազատ է ծառաթփային բուսականությունից, ասֆալտապատ է:

Կառուցապատման ենթակա հողատարածքի հարևանությամբ իրականացվում են բնակելի շենքերի կառուցման աշխատանքներ:

Մոտակա շենք-շինությունների հեռավորություններն են՝

- Բնակելի շենք 3 հարկ՝ 11.3մ
- Բնակելի շենք 20 հարկ՝ 6.57մ
- Բնակելի շենք 22 հարկ՝ 24մ
- Հասարակական շենք՝ 13-14.5մ

Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձաններ հողատարածքի վրա բացակայում են, սակայն, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից կառուցատողը կդադարեցնի աշխատանքները և դրա մասին անհապաղ կհայտնի լիազորված մարմնին:

Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, հետևաբար հողաբուսաշերտի պահպանման միջոցառումներ չի նախատեսվում:

### 1.5.2 Քանդման աշխատանքներ

Քանդվող շինությունները գտնվում են ք. Երևան, Կենտրոն Արշակունյաց պողոտա 11 հասցեում:

Ապամոնտաժման աշխատանքների իրականացման համար կառուցապատող ընկերությունը օրենքով սահմանված կարգով կստանա քանդման թույլտվություն: Քանդման աշխատանքները կիրականացվեն համաձայն քանդման աշխատանքների նախագծի դրույթների /առանց պայթեցման, փլեցման եղանակով/:

Քանդման աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական աղբը տարածքում չի կուտակվելու, անմիջապես տեղափոխվելու է նախապես Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր: Շինարարական աղբի ծավալը կկազմի մոտ 9000մ³:

Քանդման աշխատանքների ընթացքում կիրականացվեն բոլոր այն բնապահպանական մեղմացնող միջոցառումները, որոնք ներկայացված են սույն հաշվետվության 4 գլխում:

### 1.5.3 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագծվող հասարակական շենքը գտնվում է ք.Երեվան, Կենտրոն արշակունյաց պողոտա 11 հասցեում: Աշխատանքային նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել քաղաքապետարանի կողմից տրված N ՆԹ-2947-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրված 02.05.2025 թվականին երեք տարի ժամկետով, պատվիրատուի առաջադրանքը, գործող շինարարական նորմերը, անշարժ գույքի գրանցման վկայականը եվ հողամասի տեղագրական հանույթը:

Շենքի մոտեցումը նախատեսված է Արշակունյաց պողոտայից և Սևանի փողոցից:

Հասարակական շենքը ունի 3 ստորգետնա և 16 վերգետնա հարկեր (15850 քմ) ընդհանուր Շինարարան մակերեսով, (25 × 45) մ արտաքին չափսերով ավտոկայանատեղերը նախատեսված են ստորգետնյա երեք հարկերում (4171,10 քմ) ընդհանուր շինարարական մակերեսով, ավտոկայանատեղերի նախնական քանակը կազմում է 80 մեքենատեղ:

Պոմպակայանը, հակահրդեհային ռեգերվուարները տեղակայված են ավտոկայանատեղիում:

Ավտոկայանատեղին ապահովված է հրդեհամարման եվ հրդեհաշիջման համակարգով: Նախատեսված են ավտովազման և ավտոտեխասպասարկման կետեր, իսկ Էլեկտրամոբիլների համար լիցքավորման կետեր:

Ավտոկայանատեղերում աստճանավանդակների եվ վերելակների հորանների դիմաց Նախատեսվում են նախամուտք անցախցեր ինքնափակվող դռներով ei-60 մակնիշի հրակայուն ապակիներից:

Աստճանավանդակների դռները հրակայուն են և ինքնափակվող:

Վերգետնյա 16 հարկերը նախատեսված են կոմերցիոն տարածքների համար (11678,90 քմ) ընդհանուր շինարարական մակերեսով:

Երեսպատումը նախատեսվում է իրականացնել օդափոխվող ֆասադային համակարգով՝ տրավերտինե եվ բազալտե սալիկներով, նաեվ օդային միջնաշերտով կերամոգրանիտե սալիկներով:

Տանիքը նախատեսվում է հարթ՝ շահագործվող: Նախատեսված է անձրեվաջրերի ներքին ջրահեռացման համակարգ:

Ապակեպատումը՝ վիտրաժները, դռները եվ պատուհանները նախատեսված է ջերմակամրջակով, ալյումինե պրոֆիլներով:

Շենքն ապահովված է շանթապաշտպանության համակարգով: Առաջին հարկի հատակի ծածկը առաջին տիպի հրակայունության աստիճանի է:

Կանաչապատ տարածքները նախատեսված են հրշեջ մեքենաների անցման համար:

Շենքի (-0,05 )պայմանական նիշի այն հատվածներում որտեղ նախագծով վերգետնյա կառույցներ չկան, ծածկի սալերը հաշվարկված են միաժամանակ չորս և ավելի մարտական հրշեջ մեքենաների և ճարտարապետական գծագրերով նախագծված շերտերից առաջացած բեռնվածքների համար: Շենքը կապահովվի կենտրոնացված ջեռուցումով, տաք և սառը ջրամատակարարումով, տեղային հովացման համակարգով: Կաթսայատունը տեղակայվելու է տանիքում:

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման նպատակով ստորգետնյա հարկերի ավտոկայանատեղիներն ունեն երկակի նշանակություն և անհրաժեշտության դեպքում կարող են ծառայել որպես պարգագույն թաքստոց: Նկուղային հարկերում առկա են սանգույցներ՝ հարմարեցված բնակչության սակավաշարժ խմբի մարդկանց համար, վթարային անխափան լուսավորություն, որը հնարավորություն կստեղծի տեվական ժամանակ անցկացնել այնտեղ: Նախատեսված է նաև օդափոխության և ծխահեռացման համակարգ:

Համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման նախագծվող օբյեկտը հանդիսանում է IV կատեգորիայի ռիսկայնության և ենթակա է պետական համալիր փորձաքննության: Նախագիծը մշակվել է ՀՀԾՆ IV-11.07.01.2008 (ՄՄՆ 3.02-05.2003), շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար շինարարական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսված են թեքահարթակներ:

## ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

### Հողամասի տարածքային ցուցանիշներ

Կանաչապատման տարածք 373.93քմ 21.04%

Կառուցապատման տարածք 602. 15քմ 33.88%

Անջրանցիկ տարածք 801.02քմ 45.07%

Հողամասի մակերես 1 777,10 քմ

### Հասարակական շենքի կառուցապատման մակերեսներ՝

Ընդհանուր կառուցապատման մակերես- 15850 քմ

Ստորգետնյա կառուցապատման մակերես- 4171. 10քմ

Վերգետնյա կառուցապատման մակերես- 11 678.90քմ

Նախագիծը մշակված է համաձայն.

ՀՀԾՆ 30-01-2023 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

ՀՀՇՆ 21-01-2014 ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀՇՆ IV-11.03.03-02 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի ԹԻՎ 102-Ն ՀՐԱՄԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 11.09.2017Թ. ԹԻՎ 128-Ն ՀՐԱՄԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021Թ. ՄԱՐՏԻ 31 ԹԻՎ 372-Ն ՀՐԱՄԱՆ

ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՄՆ 3.02-05-2003) «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԱԿԱՎԱՇԱՐԺՈՒՆ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

#### 1.5.4 *Ջրամատակարարում և ջրահեռացում*

Հասարակական շենքի ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքային նախագիծը մշակվել է համաձայն ճարտարապետա-շինարարական գծագրերի, տեխնոլոգիական առաջադրանքի, ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերի և կանոնների:

Նախագծվել է ներքին ցանցի ջրամատակարարման և կոյուղու հետևյալ համակարգերը.

1. Խմելու տնտեսական սառը ջրամատակարարում
2. Տաք ջրամատակարարում
3. Կենցաղային կոյուղի
4. Անձրևաջրերի հեռացման կոյուղի

#### ԽՄԵԼՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՌԸ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Հասարակական շենքի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրագծից: Սառը ջրի մուտքագիծը իրականացվում է -1-րդ հարկով, St Φ57x3մմ տրամագծի խողովակով: Կենցաղային ջրամատակարարումն ապահովելու համար նկուղային -1րդ հարկի (-4.50 նիշ) ավտոկայանատեղիում նախատեսված է պոմպակայան, որտեղ կտեղադրվի պոմպային կայանք 3 պոմպով, ինվերտորով և դեկավարման վահանակով՝ խմելու-տնտեսական կարիքների համար, որոնցից երկուսը աշխատող, մեկը պահուստային: Պոմպային կայանքի տեխնիկական պարամետրերն են. H=60մ:

Ջրամատակարարման ներքին ցանցի մայրուղի բաժանարար գծերը նկուղային հարկում տեղակայված ավտոկայանատեղիում նախատեսվում է իրականացնել Φ57մմ տրամագծի պողպատե խողովակով, բնակելի հարկերում՝ կանգնակները պոլիպրոպիլենային PPR PN16 De-40-63մմ տրամագծի խողովակներով, իսկ բնականներ գնացող խողովակները

նախատեսվում է իրականացնել մետաղապլաստե MP PN16 De-25մմ տրամագծի խողովակներով:

#### ՏԱՔ ՋՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Հասարակական տարածքների տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել ըստ անհրաժեշտության, տեղադրված կենտրոնացված կաթսայատնից:

Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել PPR PN20 De-20-25մմ տրամագծի խողովակներով:

#### ԿԵՆՏԱՂԱՅԻՆ ԿՈՅՈՒՂԻ

Հասարակական տարածքների կենցաղային կեղտաջրերը ինքնահոս տարբերակով հեռանում են բակային ցանց, ապա քաղաքային կոլեկտոր: Կոյուղու կանգնակները նախատեսված են հորանների մեջ:

Կոյուղու ցանցը իրականացվում է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC DN50-100մմ խողովակներից, իսկ նկուղային հարկի հավաքող գծերը և թողարկները կոյուղու PVC DN100-150մմ խողովակներից՝ հրակայուն մեկուսացումով:

Կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսված են 2 հատ թողարկներ 150մմ տրամագծով:

Կենցաղային կեղտաջրերը շենքից հեռանում են -1 հարկով:

Ավտոկայանատեղիում բոլոր կոյուղու պոլիվինիլքլորիդային PVC խողովակները նախատեսել բազալտե բամբակի մեկուսացումով, ամրակապելով մետաղական ցանցով:

Նախագծում նշված բոլոր 90°-ի հորիզոնական տեղադրման ձևավոր մասերի փոխարեն օգտագործել 2 հատ 45°-ի ձևավոր մասեր:

#### ԱՆՋՐԵՎԱԶՐԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԿՈՅՈՒՂԻ

Հասարակական շենքի հարթ տանիքից անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով հեռանում են բակային ցանց, ապա քաղաքային կոլեկտոր: Ներքին ջրհոսը նախատեսված է պոլիվինիլքլորիդային ոչ ճնշումային կոյուղու լայնուկավոր PVC DN50-150մմ խողովակներից, իսկ նկուղային հարկի հավաքող գծերը և թողարկները կոյուղու PVC DN50-150մմ խողովակներից՝ հրակայուն մեկուսացումով: Բնակելի համալիրի անձրևաջրերի հեռացման համար նախատեսված են 2 հատ թողարկներ 150մմ տրամագծով: Խողովակների մեջ ջրի սառեցումը բացառելու համար նախատեսված են էլեկտրական պարուրակներ:

Ավտոկայանատեղիի լվացման, հալոցքի և հրդեհամարումից հավաքված ջրերի հեռացման համար նախատեսված են ջրհավաք առվակներ, որոնցից ջրերը դրենաժային պոմպով մղվում են և միանում շենքից դուրս եկող հեղեղատար կոյուղու ինքնահոս գծին, որից էլ հեռանում են բակային ցանց: Ավտոկայանատեղերի հատակի մեջ նախատեսված բետոնե առվակների վրա կտեղադրվեն 0.2մ լայնությամբ ճաղավանդակներ՝ բեռնվածքի դասը՝ B 125 (1.5-12.5տ բեռնվածքի համար):

Նախագծում նշված բոլոր 90°-ի հորիզոնական տեղադրման ձևավոր մասերի փոխարեն օգտագործել 2 հատ 45°-ի ձևավոր մասեր:



### 1.5.5 Ձեռուցում. Օդափոխություն

Նախագծվող շենքի ջեռուցման և օդափոխության նախագիծը կատարված է համաձայն՝  
 -պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի  
 -ճարտարապետա -շինարարական գծագրերի  
 -գործող շինարարական նորմերի՝

ՀՀՇՆ IV-12.02.01.-04 <<Ձեռուցման, օդափոխության և օդի լավորակում >>

ՇՆ և Կ II-7.102-98 <<Շինարարական ջերմաֆիզիկա սենքերի պատող կոնստրուկցիաների >>

3. ՀՀՇՆ II -7.01-2011 <<Շինարարական կլիմայաբանություն:

Ձեռուցման և օդափոխության համակարգերի հաշվարկի համար ընդունված են հետևյալ տվյալները՝

1. Տեղանքը՝ Ք. Երևան

2. արտաքին օդի ձմեռային հաշվարկային ջերմաստիճանը ջեռուցման և օդափոխության համակարգերի համար  $t_{արտ.} = -190C$ : 3. արտաքին օդի ամռան հաշվարկային ջերմաստիճանը հովացման և սառնամատակարարման համակարգերի համար  $t_{արտ.} = +34,50C$ :

արտաքին օդի միջին ջերմաստիճանը ջեռուցման ժամանակահատվածում  $t_{միջ.} = +1,00C$ :

4. ջեռուցման ժամանակահատվածի տևողությունը 144 օր:

Տանիքում նախատեսվում է տեղակայել կաթսայատուն ջեռուցման և տաք ջրամատակարարման համար

Սենքերում օդափոխության համակարգերի նախագծման համար հիմք են հանդիսացել ՀՀ-ում կիրառվող նորմատիվատեխնիկական փաստաթղթերը և տրված առաջադրանքը:

Հասարակական շենքում նախատեսված են արտածման համակարգեր սանհանգույցներից, խոհանոցներից: Խոհանոցներում նախատեսված են նաև թարմ օդի հորաններ:

Հասարակական հարկերում ըստ նշանակության նախատեսված են արտածման հորաններ, թարմ օդի մուտքը նախատեսվում է ֆասադներից:

Նախատեսված է վթարային օդափոխության համակարգ՝ ծխահեռացման և կոմպենսացիայի, վերջիններիս օդամուղերը տեղադրված են տանիքում:

Ավտոկայանատեղիում նախատեսված է ընդհանուր փոխանակային և վթարային օդափոխության համակարգ: Ծխահեռացման և ընդհանուր փոխանակային արտածման համակարգերը նախատեսված են մեկ մագիստրալ օդատարով, համակարգերը առանձնացված են կրակակասեցնող փականներով, օդամուղերը ևս առանձին են և տեղադրված են տանիքում: Կոմպենսացիայի և ընդհանուր փոխանակային ներածման համակարգերը նախատեսված են մեկ մագիստրալ օդատարով, օդամուղերը նախատեսված են յուրաքանչյուր համակարգի համար առանձին և տեղադրված են տանիքում: Ծխահեռացման համակարգի օդատարերը նախատեսվում են սև մետաղից 1,2մմ հաստությամբ: Վերջիններս պետք է մեկուսացնել հրակայուն մեկուսիչով 60ր, և պատվեն հրակայուն ներկով:

Ադմուկի խլեցման համար նախատեսված են.

Օդամղիչների հետ համակարգի միացումը կատարել ճկուն ներդիրների միջոցով:

Օդատարների հաստությունը ընդունված են ըստ ՀՀՇՆ IV-12.02.01-04

### 1.5.6 Էլ. մատակարարում

Հասարակական շենքի Էլ. սնուցումը նախատեսված է իրականացնել 2 մալուխային գծերով, օգտագործելով նաև փոխանջատիչ ռեգերվային սնուցումը միացնելու համար:



Ընդանուր հզորությունը կազմում է 900 կՎտ:

Սպառիչների լարումն 380/220 Վ:

Էլ. էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցերում նախատեսված է իրականացնել 5 ջղանի մալուխներով:

Լ1,Լ2,Լ3,N,PE, միաֆազ ցանցերում՝ 3 ջղանի մալուխներով Լ1,N,PE:

Աստիճանավանդակներում և միջանցքներում նախատեսված է աշխատանքային, վթարային և տարհանման լուսավորություն:

Աստիճանավանդակների լուսավորության կառավարման համար օգտագործված են տվիչներ, որոնք կմիացնեն լուսավորությունը մարդկանց ներկայության դեպքում ավտոմատ կերպով:

Կոմերցիոն տարածքների սնուցումը իրականացվում է հաշվիչների արկղներից առանձին սնող գծերով: Հաշվիչների արկղերը տեղադրված են առաջին հարկում:

### Հողանցում

Նախատեսված է հողանցման կոնսուր, տարվա ցանկացած եղանակին հողանցման սարքվածքի (ՀՍ) նորմավորված դիմադրությունը պետք է փոքր լինի 4 Օհմից:

Արտաքին ՀՍ-ն բաղկացած է 8 հատ L=50x50x5մմ 2.5 մ երկարությամբ ցինկապատ պողպատյա ուղղահայաց անկյունակներից, որոնք միմյանցից 3 մ հեռավորությամբ խրվում են գրունտում և միմյանց հետ միացվում 40x4 հատվածքով ցինկապատ շերտապողպատով:

Նշված քանակի էլեկտրոդներով նորմավորված դիմադրությունը չապահովելու դեպքում անհրաժեշտ է ավելացնել էլեկտրոդների քանակը:

### Շանթապաշտպանություն

Նախատեսված է շանթապաշտպանության համակարգ, որը բաղկացած է տանիքի 12մ քայլով ցանցից, իջեցումներից և հողանցման սարքվածքից: Ցանցը իրենից ներկայացնում է առավելագույնը 12մ քայլով միմյանց միացված ցինկապատ 8մմ տրամագծով ձողերից շենքի ծածկի վրա:

Իջեցումները իրականացվում են 8մմ ցինկապատ ձողեր, ամրացված շենքի արտաքին պատին երեսպատման տակ կամ վրա: Իջեցումների հեռավորությունը պատուհաններից կամ մուտքերից պետք է լինի առնվազն 3մ: Հողանցման սարքը բաղկացած է 6 հատ էլեկտրոդներից, որոնք խրվում են գրունտում միմյանցից առավելագույնը 25մ հեռավորության վրա: Շանթապաշտպանության հողանցման սարքվածքի նորմավորված դիմադրությունը տարվա ցանկացած եղանակին պետք է փոքր լինի 10 Օհմից:

Խրամուղու մեջ հետ լցվող հողը չպետք է պարունակի քարեր և շինարարական աղբ:

Ելնելով տեղանքից հնարավոր է փոխել էլեկտրոդների տեղը՝ պահպանելով քանակը:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համաձայն և գործող ПУЭ-7-ի պահանջների

## **1.5.7 Գազամատակարարում**

Հասարակական շենքի գազամատակարարման նպատակով ընկերությունը դիմել է Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու

համար: Գազալրոմ Արմենիա ՓԲ ընկերության պատասխանը կցվախ է Հավելվածներ  
բաժնում:

### 1.5.8 *Էներգախնայողության միջոցառումներ*

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են հետևյալ միջոցառումները

- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ
- Արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում.
- Օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութերով.
- Ջերմային կորուստների նվազեցման նպատակով կիրառվում են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ /пеноплекс/:
- Օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

### 1.5.9 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, համաձայն Կառավարության 2018 թվականի փետրվարի N108 որոշման պահանջներին համապատասխան:

Որպես կանաչապատման նախագծի հիմք հանդիսանում են.

- պատվիրատուի կողմից տրամադրվող գլխավոր հատակագիծը,
- Երևանի քաղաքապետի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին կազմում է 40 % և ավելի:

Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները.

- Ոռոգման համակարգի անցկացում,
- Համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում,
- Ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում ,
- Թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում,
- Բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում. պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից, վրան ավելացնել մուլչ:

Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատունկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղիան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ:

Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերման վայրի կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ, անհրաժեշտ բուսահողի ծավալը կկազմի մոտ 360մ<sup>3</sup>:

Նախատեսվում է կազմակերպված կաթիլային ոռոգման համակարգ:

Կանաչապատ տարածքների ոռոգման ջրամատակարարման համար ընկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի լիազորված մարմնին համապատասխան տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Ուսումնասիրելով տեղանքը և խորհրդակցելով դենդրոլոգի հետ՝ առաջարկվում է տեղադրել ստորև նշված բույսերի տեսականին, համապատասխան քանակներով.

**Կաղնի շագանակատերև - 7 հատ**

**Թխկի սրատերև - 3 հատ**

**Կատալպա սովորական – 4 հատ**

**Դրախտածառ – 5 հատ**

**Արձաթափայլ եղևնի – 5 հատ**

**Սիրիական վարդ (հիբիսկուս) – 16 հատ**

**Գնդաձև սամշիթ – 50 հատ**

**Սիզամարգ – 358 մ<sup>2</sup>**

#### **1.5.10 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ**

Կանաչապատ տարածքի 1 մ<sup>2</sup>-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/ մ<sup>2</sup>:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝  $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝  $S_1 = 358.15 \text{ մ}^2$ ,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, K = 1

t - ռոտման օրերի պլանավորված թվաքանակն է, t = 175 օր

$$W_{u.3} = (0.006 \times 358.15) \times 2 \times 175 = 752,115 \text{ մ}^3/\text{տարի}$$

## 1.6 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (զլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնելիս 2 էքսկավատորներ և 1 կռունկ, իսկ շենքերի կառուցման ընթացքում 3 ամրակապովի և մեկ ավտոմոբիլային կռունկ: Հաշվարկը առված է ենթադրելով, որ այս շին.տեխնիկան շահագործվում միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left( \frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{k B} \right)$$

Հողային աշխատանքների փուլ

Ելակետային տվյալներ

- Էքսկավատորի CAT 320 ձայնային հզորություն ( $L_{w1}$ )՝ 99 դԲ

- Կոունկ LIEBHERR LTM 1100-4.2 ձայնային հզորություն ( $L_{w2}$ )՝ 100 դԲ
- Հեռավորություն ( $r$ )՝ 50 մետր

**Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ**

- $\chi = 1$  (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$  (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$  (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$  (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$  (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ<sup>2</sup>)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝  $L_{w1} = 99 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1/(2/\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 99 + 10 \cdot (-16.98) = 82.02$  դԲ
- Կոունկի աղմուկի մակարդակ՝  $L_{w2} = 100 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1/(2/\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 100 + 10 \cdot (-16.98) = 83.02$  դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{A_{eq}} = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{82.02/10\}} + 10^{\{83.02/10\}}) = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{8.202\}} + 10^{\{8.302\}}) = 87.15 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու էքսկավատոր և մեկ կոունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 87.15 դԲ:

Շենքերի կառուցման փուլ

**Ելակետային տվյալներ**

- Կոունկ QTZ 160 ձայնային հզորություն ( $L_{w1}$ )՝ 105 դԲ
- Հեռավորություն ( $r$ )՝ 50 մետր

**Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ**

- $\chi = 1$  (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$  (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$  (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$  (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$  (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ<sup>2</sup>)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Կոունկ աղմուկի մակարդակ՝  $L_{w1} = 105 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1/(2/\pi \cdot 50^2) + 4/1 \cdot 200) = 105 + 10 \cdot (-16.98) = 88.02$  դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{A_{eq}} = 10 \cdot \log_{10} (3 \cdot 10^{\{88.02/10\}}) = 10 \cdot \log_{10} (3 \cdot 10^{\{8.802\}}) = 92.79 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երեք կոունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 92.79 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 200 կգ/մ<sup>3</sup>:

Ցանկապատը հանդիսանում է միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{աղ} = 23 \cdot \lg m_{է} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{աղ} = 13 \cdot \lg m_{է} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ  $m_{է} = K \cdot m$  - մակերեսի խտության էկվիվալենտն է,

$m$  - մակերեսի խտությունն է, կգ/մ<sup>3</sup>,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ<sup>3</sup>

$$m_t = 7850 * 1 = 7850$$

$$L_{աղ} = 23 * \lg * m_t - 13 = 23 * \lg(7850) - 13 = 23 * 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

Հողային աշխատանքների փուլ

$$L_{A_{տար}} = L_{A_{էկվ}} - L_{աղ} = 87.15 - 79.56 = 7.59 \text{ դԲ}$$

Շենքերի կառուցման փուլ

$$L_{A_{տար}} = L_{A_{էկվ}} - L_{աղ} = 92.79 - 79.56 = 13.23 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը հողային աշխատանքների փուլում կկազմի 7.59 դԲ, իսկ շենքերի կառուցման փուլում՝ 13.23 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:

Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:



1.6.1 Նախատեսվող գործունեության իրավիճակային հատակագիծ

ԻՐԱՂԻՍԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ (Google-Earth) Մ 1:1000










1.6.2 Գլխավոր հատակագիծ









1.6.3 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

		ՀՀ Ք.ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՅ ՊՈՂՈՏԱ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ																																																	
		Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ո Ւ Յ Յ																																																	
ՀՀ	Խումբը	Աշխատանքների անվանումները	Չ.մ.	Ծավալը	Հիմնավորումը	Աշխատատար ույունը		Հերթավորման թիվը	Բանվորների թիվը	Տևողությունը, օր	I ՏԱՐԻ												II ՏԱՐԻ												III ՏԱՐԻ																
						Նորման, մ-ժամ	Ընդ. մարդ-հերթ				ամիսներ																																								
	2	3	4	5	6	7	8	9	10	11	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36					
1	Ա	Նախապատրաստական և քանդման աշխատանքներ					600	1	10	60	#																																								
		Տարածքի ցանկապատում, մասնակի համահարթում, ժամանակավոր կոմունիկացիաների տեղադրում, գոյություն ունեցողների հեռացում կամ վերատեղադրում, շինարարական մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ, վարչատնտեսական և սանիտարահիգիենիկ տարածքների կարգավորում:																																																	
2	Բ	Հողային աշխատանքներ	մ <sup>3</sup>	23000.0			2700		10	270																																									
	Գ	Երկաթբետոնե կառուցվածքներ և շարվածք																																																	
3		Հիմքերի նախապատրաստական շերտի իրականացում	մ <sup>3</sup>	500.0	11-01-002-04	2.5	156.25	1.5	20	600																																									
4		Հիմքերի իրականացում	մ <sup>3</sup>	2450.0	06-01-001-22	4.76	1457.75																																												
5		Զրամեկուսացման աշխատանքներ					200.00																																												
6		Երկաթբետոնե սյուների, կանգնակների իրականացում	մ <sup>3</sup>	780.0	06-01-107-3	12.72	1240.20																																												
7		Երկաթբետոնե հեծանների իրականացում	մ <sup>3</sup>	1790.0	06-01-109-1	16.87	3774.7																																												
8		Երկաթբետոնե ծածկերի իրականացում	մ <sup>3</sup>	3500.0	06-01-110-1	8.67	3793.1																																												
9		Երկաթբետոնե պատերի և դիաֆրագմաների իրականացում	մ <sup>3</sup>	1000.0	06-01-026-1	10.9	1362.5																																												
10		Այլ երկաթբետոնե, բետոնե, խամքարաբետոնե աշխատանքներ					200.00																																												
11		Շարվածքային աշխատանքներ					7200.0		16	450																																									
12	Դ	Տանիքային աշխատանքներ					1800.00		10	180																																									
13	Ե	Բացվածքների լրացում, հատակներ, ներքին և արտաքին հարդարում					16200.0		30	540																																									
14	Զ	Ինժեներական ցանցեր					2700.0		10	270																																									
15	Է	Բարեկարգում և կանաչապատում					1500.0		10	150																																									
		Ընդհանուր					44884			2520																																									

Բանվորների առավելագույն քանակը 76 մարդ, միջինը՝ 45:  
Աշխատանքների համատեղման գործակիցը՝ 2520/1080=2,34



## 2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան:

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:



3 Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4 Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

## 2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, կառուցման ընդհանուր տևողությունը կազմում է 36 ամիս, 3.0 օրացուցային տարի: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հիմնական փուլում կատարվում է մասնաշենքերի շինարարությունն՝ ըստ նշված ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի:

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են “հետ-բահ” եքսկավատորով:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները անհրաժեշտ է կատարել պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները ըստ ՇՆԵՎԿ III-IV.2008-ի դրույթներով, ինչպես նաև աշխատանքների կատարման նախագծում նշված լրացուցիչ միջոցառումներով:

Հիմքերը տեղադրելուց առաջ հիմնատակը պետք է ընդունվի երկրաբանի կողմից հաստատված ակտով (բաց փոստրակի ընդունման ակտ):

Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը /նախագծով այն համարվում է 10մ, նշահարելով դեղին գույնով, ապահովել դիսպետչերական կամ մեկ աշտարակային կռունկի գործողության գոտում բացառել կից շենքի աշտարակային կռունկի գործողությունը տվյալ գոտում/: Անմիջապես հիմքերի տակ բնահողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Բեռի ուղղահայաց և հորիզոնական տեղափոխությունները պետք է կատարվեն ազդարարի ազդանշանին համապատասխան, պահպանելով անվտանգության գոտու սահմանները, ինչպես նաև բեռի անկման հորիզոնական տեղափոխությունը:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը:

Աշտարակային կռունկի մոնտաժումը ե/բետոնե ծածկի սալի վրա կատարվում է նախագծի կոնստրուկտորի հիմնավորված լոկալ հաշվարկով: Աշտարակային կռունկի մոնտաժման աշխատանքները իրականացվում է համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպության կողմից ըստ կռունկի անձնագրային տվյալների:

Ապրանքային բետոնը շին.հրապարակ է բերվում պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղխային հանգույցից: Ամրանային իրերը պատրաստվում են հատուկ պոլիգոններում, մասամբ շին. հրապարակում:

Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակումը հետևում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց գերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար, և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են ՇՄԱԳ հաշվետվության հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

### **Շինարարական աշխատանքների բնութագրերը և տիպերը հետևյալն են**

Հասարակական նշանակալության շենք կառուցման շինարարական աշխատանքները ներառում են.

- Նախապատրաստական փուլի աշխատանքներ
- Հողային աշխատանքներ
- Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ
- Պատեր և միջնապատեր
- Տանիքային աշխատանքներ

- Ներքին ինժեներական ցանցեր
- Հարդարման աշխատանքներ
- Երեսպատման աշխատանքներ
- Տարածքի բարեկարգման աշխատանքներ, որոնք ներառում են բետոնյա սալվածքներ և ասֆալտապատ հարթակներ:

## 2.2 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1՝ Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ՝

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Աշտարակային կցովի վերամբարձ կռունկ	QTZ 63 H5013A	1
2	Ավտոմոբիլային կտունկ	LIEBHERR LTM 1100-4.2	1
3	Ավտոկռունկ	KC 55713-6 ГАЛИЧАНИН	1
4	Էքսկավատոր՝	CAT 325DL(01) ,	3
5	Գլղոն	CAT CS 563	1
6	Շարժական կոմպրեսոր	Comp air C 76	1
8	Բետոնամղիչներ	777 DO 01 Mercedes Benz Axor,	2
9	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	2
10	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	4
11	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	2
12	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИЭ-4709А	6
13	Եռակցման սարքեր	WARRIOR 500՝ CC/CV	6
14	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		4
15	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	3
16	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
17	Ավտոբետոնախառնիչ	Kamaz 58149 z	ըստ հաշվարկի



Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

## 2.3 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

### *Հողային աշխատանքներ՝*

*Հանույթ՝ 23000մ³*

*Հետլիցք՝ 6900 մ³*

Ավելցուկային 16100 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

### *Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 185 մարդ, որից*

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ
- Բանվորներ - 45 մարդ

#### 2.3.1 *Նյութերի և բնառեսուրսների օգտագործում*

Հասարակական նշանակալության շենք կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

**ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$W_{\Sigma. \text{т.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T$ , որտեղ

**n** – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

**N**– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

**n<sub>1</sub>**– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 45 մարդ

**N<sub>1</sub>** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

**T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 936 օր

$W_{\Sigma. \text{т.}} = (3 \times 0.016 + 45 \times 0.025) \times 936 = 1098 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.17 \text{ մ}^3/\text{օր:}$

**б) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$U_1 = S_1 \times K_1 \times T$ , որտեղ՝

**S<sub>1</sub>** – ջրվող տարածքի մակերեսը, 1777մ²,

**K<sub>1</sub>** – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

**T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

**D** – օրեկան ջրցանի քանակը, 2

$$U_1 = 1777 \times 0.0015 \times 450 \times 2 = 2398.95 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 5,3 \text{ մ}^3/\text{օր}$$

ց) Անիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_2 = S_2 \times K_2 \times T, \text{ որտեղ՝}$$

$S_1$  – լվացվող ավտոմեքենաների քանակը, 15 հատ,

$K_1$  – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 մ<sup>3</sup>,

$T$  – ժամանակահատվածը օրերով, 936

$$U_2 = 15 \times 0.14 \times 936 = 1965,6 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 2.1 \text{ մ}^3/\text{օր}$$

**Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 5462,55 մ<sup>3</sup>/շին. ժամ:**

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բնակարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, մասնագիտացված ընկերության կողմից:

Խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից, պայմանագրային հիմունքներով:

Եղանակային տեղումներից /արհեստական առվակների միջոցով/ և անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված 25մ<sup>3</sup> ծավալով պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեգում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

### 3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Վարչական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Երևան քաղաքի հարավային կողմում, Շենգավիթ վարչական շրջանի տարածքում, դրա հյուսիս-րևելյան եզրամասում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տեղամասը տեղադրված է Արարատյան լճակուտակումային հարթավայրի սահմաններում, նրա հյուսիս-արևելյան եզրամասում, էոզիոնա-հողմնահարման լանջերին անցման գոտում, Հրազդան և Գետառ գետերի միջանկյալ լեզվականման ջրբաժանի արևելյան հատվածում: Այդ պատճառով տարածքում մասամբ արտահայտված են հարթավայրին և նախալեռնային գոտիներին հատուկ ռելիեֆի ձևերը: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ, կառուցապատված է:

Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 962.5-963.5 մետրի սահմաններում:

Տարածքում հորատման աշխատանքների փուլում կոմունիկացիոն հաղորդակցուղիներ չեն բացահայտվել:

#### 3.1 Ջրային ցանց

Ջրային ցանցը տեղամասում քիչ զարգացած է, տարածքի հիմնական ջրային երակ է հանդիսանում Հրազդան գետը և նրա ձախակողմյան վտակ Գետառ գետը, որը բնական դրենացման մարզ է հանդիսանում գրունտային ջրերի համար: Գետառ գետի հունը գրեթե ամբողջությամբ կարգավորված է տարատեսակ ինժեներական կառույցներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքում առկա են Նեոգեն-Չորրորդականի հասակի ալյուվիալ, պրոլյուվիալ առաջացումների չստորաբաժանված համախմբերի հետ կապված ստորգետնյա ջրերը, որոնք պատկանում են ծակոտկենա-դատարկությունների ջրերի տարատեսակներին: Տեղամասում իրականացված հորատման աշխատանքների ընթացքում մինչև 30.0 մետր խորությունը գրունտային ջրերը բացահայտվել են բոլոր հորատանցքերում:

#### 3.2 Երկրաբանական կառուցվածքը:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են Նեոգեն-Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումները՝ բազալտ, անդեզիտա-բազալտներ, հրաբխային խարամ և մոխիր, հրաբխային ավազներ և այլն, որոնք ծածկված են Չորրորդականի հասակի ալյուվիալ պրոլյուվիալ առաջացումների հզոր շերտախմբով (համաձայն հարակից հատվածում մինչև 1990թ հորատված հորատանցքի տվյալների 40.0 մետրից ավել), որոնք էլ իրենց հերթին ծածկված են ժամանակակից տեխնոգեն առաջացումներով:

Հետազոտվող տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում հետազոտման խորության սահմաններում (30.0 մետր) վերնից ներքև բացահայտվել են միայն նստվածքային գրունտները:

### 3.3 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ թիվ-1 լիցքային գրունտ չպառկապնդված, կավավազա-մանրախճային և մեծաբեկորային կազմի, մեծաբեկորների տրամագիծը հասնում է 1.5 մետրի, ավազային նյութի խառնուրդով մինչև 20%, շինարարական, կենցաղային և մետաղական թափոններով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 1.0-3.2 մետր:

Տեխնածին առաջացումներ

Շերտ թիվ-2 բազալտ, անդեզիտա-բազալտ, մասամբ մեծաբեկորային, մոխրագույն, ծակոտկեն և ճեղքավորված, մասամբ ջարդոտված, երբեմն խճի աստիճանի, զանգվածային, ամուր, ստորին մասի միջակայքերում հոծ, զանգվածային, թույլ ճեղքավորված, արմատական տեղադրմամբ, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 7.0 մետր:

Չորրորդականի հասակի հրաբխային առաջացումներ

Շերտ թիվ-3 մեծաբեկորային գրունտ, խարամացած և շեղաքարացած հրաբխային ապարներից, միջբեկորային ավազային և կավավազային լցանյութով մինչև 10%, տեղ-տեղ կավավազների և փոշային գրունտների բներով և ոսպնյակներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, հզորությունը՝ 0.5-2.0 մետր:

Չորրորդականի էյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-4 ավազակավ շագանակագույն, մուգ գորշավուն երանգներով, կիսապինդ, երբեմն ձիգ պլաստիկ թանձրության, խիտ, կոպճի և ճալաքարի, հազվադեպ գլաքարերի պարունակությամբ մինչև 10%, ավազի բներով, ոսպնյակներով, նրբաշերտերով, տարածումը համատարած է, հզորությունը՝ 0.8-3.0 մետր:

Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-5 ավազ մանր և միջին, երբեմն կոպճային կազմի, ճալաքարի, հազվադեպ գլաքարերի պարունակությամբ մինչև 10%, կավավազի և փոշենման ավազի նրբաշերտերով, ոսպնյակներով, տեղ-տեղ կավերի նրբաշերտերով, սակավախոնավ, տարածումը սահմանափակ է, բացահայտված հզորությունը՝ 0.5-1.5 մետր, հանդես է գալիս նաև կավային գրունտների շերտախմբում ենթաշերտերի տեսքով:

Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

Շերտ թիվ-6 ճալաքարա-կոպճային գրունտ, գլաքարերով, հրաբխային ապարներից, լավ հղկվածության, ավազային, կավավազային լցանյութով մինչև 35%, տարահատիկ ավազների և կավային գրունտների նրբաշերտերով, ոսպնյակներով, բներով, գրունտը միջին խտության է, լցանյութը՝ ջրհագեցած, տարածումը համատարած է, բացահայտված հզորությունը՝ 19.0 մետր:

Չորրորդականի հասակի ալյուվիա-պրոլյուվիալ առաջացումներ

3.4 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների:

Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 տվյալների համաձայն:

Օդի միջին ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 2.1.

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենաոռաբ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28

Տեղումների բնութագիրը ըստ Երևան-«Էրեբունի» օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

**Տեղումների բնութագիրը**

Աղյուսակ 2.3.

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն												Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ	
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			Տարեկան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
«Էրեբունի»	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Երևան-«Էրեբունի» մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

**Քամու բնութագիրը**

Աղյուսակ 2.4.



Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագությունները նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագությունները առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ - արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս - արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Էրեբունի»	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	Հվ	2.4	Հվ	2.7
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7						
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9				
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6						
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8				
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3						
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1.0				
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5						

### 3.5 Օդային ավազան

Օդային ավազանի որակի մոնիթորինգը իրականացվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոթերմության և մոնիտորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից:


Երևան քաղաքում կատարվում են փոշու\*, ծծմբի երկօքսիդի\*\*, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան:

2024 թվականի 1-ին եռամսյակում Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսներին չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:






Գծապատկեր 21. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները






Գծապատկեր 15. Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին  
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



**Պարզաձև կան նշաններ**


- Պատիվ նմուշառման  
դիտակետեր
- Անդրվ նմուշառման  
դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ  
և փողոցներ
- Երկաթգծեր
- Երևանի վարչական  
ըրջաններ

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն  
բաշխվածության ամսականը ( $մկգ/մ^3$ )





**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



Սույն հաշվետվությամբ նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ  
ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (ֆոն), մգ/մ3
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142

3.6 Զրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է «ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2024 թվականի 1-ին եռամսյակի տեղեկագրից բերված են ստորև:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Զրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 14 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ<sub>5</sub>-ով, ԹՔՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

### 3.7 Հողերի նկարագիրը

#### *Հողերը*

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

### 3.8 Հողային ռեսուրսներ

Հասարակական նշանակալության շենք նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 23000 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 6900 մ<sup>3</sup> հետլիցք: Ավելցուկային 16100 խմ հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով՝

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինարարական աղբից:

### 3.9 Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում



ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1. Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակներով:

Գործունեության ենթակա տարածքում տարածված է կիսաանապատային գոտուն բնորոշ բազմամյա խոտի տեսքով խառը աճած բուսականություն, մասնավորապես՝ Սեզ սողացող (*E. repens*), Սեզ սանրանմանը (*E. cristatum*), Սեզ մազակիրը (*E. trichophora*), Սեզ միջինը (*E. intermedia*), Սեզ երկարավունը (*E. elongatum*):

Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել:

### 3.10 Կենդանական աշխարհ

Երևանի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով:

Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտրագորտը, կանաչ դողողը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարաոտ սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր: Հրագդան գետում հանդիպում են ձկների 7 տեսակ:

Պետք է փաստել, որ դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է, կամ բացառվում է:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Նորք-Մարաշ վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների հետ:

### 3.11 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն

օգտագործումն ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում տարածաշրջանում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ): Սակայն, այդ ԲՀՊՏ-ները գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից զգալի հեռավորության վրա, որտեղ դրանք չեն կարող կրել գործունեության ազդեցությունը: Այսպես մոտակա ԲՀՊՏ-ներն են՝

- «Էրեբունի» արգելոց՝ 15 կմ,
- «Խոսրովի անտառ» արգելոց՝ 25 կմ:

### 3.12 Պատմամշակութային հուշարձաններ

Ներկայացնում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի պատմության և մշակութային հուշարձանների ցանկը: Ցանկում ներառված է ընդամենը 458 հուշարձան (232 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
<a href="#">Ակադեմիայի համակառույց. Գիտությունների Ազգային Ակադեմիա</a>	1958 թվական, 1970-ական թվականներ	Մարշալ Բաղրամյան պող. 24	<a href="#">1.6/1</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Մ. Մանվելյան, հիմնադրված՝ 1943 թվական
Գլխավոր մասնաշենք	1958 թվական		<a href="#">1.6/1.1</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Մ. Մանվելյան
Բարձրաքանդակներ Գիտության երախտավորներին	1958 թվական		<a href="#">1.6/1.1.1</a>	քանդակ՝ Ա. Մարգարյան, գլխավոր մասնաշենքի նիստերի դահլիճում
Պաննոներ «Հայ գիտության կաճառներ». («Մեսրոպ Մաշտոց», «Մովսես Խորենացի»)	1958 թվական		<a href="#">1.6/1.1.2</a>	նկ.՝ Վ. Խաչատրյան, գլխավոր մասնաշենքի 1-ին հարկի նախասրահում
Ինստիտուտի շենք. Երկրաբանական գիտությունների ինստիտուտը	1958 թվական		<a href="#">1.6/1.2</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Մ. Մանվելյան
Ինստիտուտի շենք. Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտները	1958 թվական		<a href="#">1.6/1.3</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Մ. Մանվելյան
Ակադեմիայի շենք. Հայկական գյուղատնտեսական ակադեմիան	1932 թվական, 1940 թվական, 1956 թվական	Տերյան փող. 74	<a href="#">1.6/2</a>	նախկինում՝ Գյուղատնտեսական ինստիտուտ, հիմնադրված՝ 1930 թվական, ճարտ.՝ Ս. Սաֆարյան
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհված գյուղատնտեսական ինստիտուտի դասախոսներին և	1985 թվական		<a href="#">1.6/2.1</a>	ճարտ.՝ Ա. Մխիթարյան, շենքի դիմաց

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
ուսանողներին				
Առանձնատուն Հայկանուշ Դանիելյանի	1947 թվական	Մարշալ Բաղրամյան պող. 8	<a href="#">1.6/3</a>	ճարտ.՝ Պ. Մարյան
<a href="#">Առանձնատուն Աղասի Խանջյանի (Ժողկոմխորհի)</a>	1920-ական թվականներ	Հրազդանի ձորում, «Հրազդան» մարզադաշտից հս-ամ	<a href="#">1.6/4</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան
Առանձնատուն ՀԿԿ Կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի	1939 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 47	<a href="#">1.6/5</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, վրկո՝ 1985 թվական, այժմ՝ Ընդունելությունների տուն «Հրազդան-2»
Աստղադիտարանի շենք	1926 թվական	Աբովյան և Տերյան փող. միջև, Ուսանողական պուրակ	<a href="#">1.6/6</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան
Արդյունաբերական համակառույց. «Արարատ» գինեգործական արդյունաբերության միավորման համալիրը	1887-1910 թվականներ, 1938 թվական, 1945-1963 թվականներ	Իսակովի փող. 9	<a href="#">1.6/7</a>	
Գործարանի համալիր. Շուստովի (Թախրյանի) Գինու-կոնյակի գործարանը	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ		<a href="#">1.6/7.1</a>	
Գինու մառան	1887 թվական		<a href="#">1.6/7.1.1</a>	
Խմորման արտադրամասի մասնաշենք	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ		<a href="#">1.6/7.1.2</a>	
Կոնյակի մառաններ	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ		<a href="#">1.6/7.1.3</a>	
Պահեստի մասնաշենք	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ		<a href="#">1.6/7.1.4</a>	
Սպիրտի գտման մասնաշենք	1907 թվական		<a href="#">1.6/7.1.5</a>	ճարտ.՝ Մ. ֆոն դեր Նոնեն
Տակառագործական արհեստանոցի մասնաշենք	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ		<a href="#">1.6/7.1.6</a>	
«Արարատ» գինեգործական արդյունաբերության միավորման մառանների շենք	1937-1961 թվականներ		<a href="#">1.6/7.2</a>	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, Գ. Քոչար, կոնստ՝ Ա. Մարտիրոսյան
Բարձրաքանդակներ	1961 թվական		<a href="#">1.6/7.2.1</a>	քանդակ՝ Ա. Հարությունյան, էսքիզները՝ Ռ. Իսրայելյանի, շենքի ճակատին



հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
Հուշարձան՝ Գինու կոմբինատի հիմնադրման 100-ամյակին	1977 թվական		<a href="#">1.6/7.3</a>	ճարտ.՝ Ս. Գուրգադյան, համալիրի բակում
<a href="#">Արդյունաբերական շենք. «Արարատ» արդյունաբերական միավորման կոնյակի գործարանի գլխավոր մասնաշենքը (Երևանի կոնյակի գործարան)</a>	1944 թվական	Ծովակալ Բասկովի պող. 2	<a href="#">1.6/8</a>	ճարտ.՝ Հ. Մարգարյան, Բ. Արզումանյան
Բարձրաքանդակներ	1975 թվական		<a href="#">1.6/8.1</a>	քանդակ՝ Ա. Հովսեփյան, դահլիճում
Խաչքար	1579 թվական		<a href="#">1.6/8.2</a>	բերված՝ Ջուղայից
Հուշարձան՝ Մարգար Մեղրակյանի	1975 թվական		<a href="#">1.6/8.3</a>	քանդակ՝ Ա. Հովսեփյան
Արվեստանոց-թանգարան Մինաս Ավետիսյանի	1975 թվական	Նալբանդյան փող. 29	<a href="#">1.6/9</a>	
<a href="#">Արվեստանոց-թանգարան Գևորգ Գրիգորյանի (Զիռտոտ)</a>	1980 թվական	Մաշտոցի փող. 45ա	<a href="#">1.6/10</a>	վրկո՝ 1987 թվական
Բանկի շենք. Պետական բանկ	1933 թվական	Նալբանդյան փող. 6	<a href="#">1.6/11</a>	բանկը հիմնադրվել է 1922 թվական, վրկո՝ 1996-2000 թվականներ, ճարտ.՝ Ն. Բակ
<a href="#">Բարձրաքանդակ «Կժուլ աղջիկը»</a>	1939 թվական	Աբովյան պուրակ	<a href="#">1.6/12</a>	քանդակ՝ <a href="#">Այծեմնիկ Ուրարտու</a> , պուրակի հս կողմում
<a href="#">Բարձրաքանդակ «Չայկովսկի»</a>	1982 թվական	Եզնիկ Կողբացու փող. 36	<a href="#">1.6/13</a>	քանդակ՝ Ե. Գոջաբաշյան, ճարտ.՝ Ջ. Թորոսյան, համանուն երաժշտական դպրոցի ճակատին
Բերդշեն Ծիծեռնակաբերդ	մ.թ.ա. 2-1 հզ, 3-13-րդ դարեր	Հրազդան գետի աջ ափին, «Ծիծեռնակաբերդ» զբոսայգու տարածքում	<a href="#">1.6/14</a>	Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրից 0, 6-0, 8 կմ աե
Բնակելի տուն	1930 թվական	Աբովյան փող. 19	<a href="#">1.6/15</a>	ճարտ.՝ Ա. Ահարոնյան, Հ. Մարգարյան
Բնակելի տուն	1927 թվական	Աբովյան փող. 23	<a href="#">1.6/16</a>	ճարտ.՝ Հ. Խիզանյան
Բնակելի տուն՝ «Հօկ»-ի	1928 թվական	Աբովյան փող. 29	<a href="#">1.6/17</a>	
<a href="#">Տուն-թանգարան Դերենիկ Դեմիրճյանի</a>	1977 թվական	Աբովյան փող. 29	<a href="#">1.6/17.1</a>	բնակելի տան 1-ին հարկում
<a href="#">Հուշակոթող՝ Դերենիկ Դեմիրճյանի</a>	1977 թվական	Աբովյան փող. 29	<a href="#">1.6/17.2</a>	ճարտ.՝ Ռ. Ալավերդյան
Բնակելի տուն	1950-ական թվականներ	Աբովյան փող. 31	<a href="#">1.6/18</a>	ճարտ.՝ Մ. Գրիգորյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
<a href="#">Բնակելի տուն «Պրոֆեսորներ»</a>	1934 թվական	Աբովյան փող. 32	<a href="#">1.6/19</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան
Հուշակոթող «Հայ մշակույթի երախտավորներ»	1968 թվական		<a href="#">1.6/19.1</a>	ճարտ.՝ Կ. Վարդանյան
Բնակելի տուն Վլադիմիր Բրաժնիկովի	20-րդ դարի սկիզբ	Աբովյան փող. 68	<a href="#">1.6/20</a>	ճարտ.՝ Վ. Միրզոյան
Բնակելի տուն Բաբանների	19-20-րդ դարեր	Ազաթանգեղոսի փող. 3	<a href="#">1.6/21</a>	ճարտ.՝ <a href="#">Բորիս Մեհրաբյան</a>
Բնակելի տուն	1942 թվական	Ամիրյան փող. 3	<a href="#">1.6/22</a>	ճարտ.՝ Կ. Հակոբյան
Բնակելի տուն	19-20-րդ դարեր	Գրիգոր Լուսավորչի փող. 7	<a href="#">1.6/23</a>	պահպանված է միայն գլխ. ճակատի քարե հատվածը, վերակառուցված, այժմ՝ «Եվրոմոտորս» ընկերության շենք
Բնակելի տուն	19-րդ դար	Դեղատան փող. 13	<a href="#">1.6/24</a>	
Բնակելի տուն Արտեմ Յարայանի	19-20-րդ դարեր	Եկմայան 1-ին փող. նրբ. 9	<a href="#">1.6/25</a>	պահպանվել է միայն գլխ. ճակատը
Բնակելի տուն	20-րդ դարի սկզբ	Զաքիյան փող. 5 (Խորհուրդների փող. 19)	<a href="#">1.6/26</a>	
Բնակելի տուն	1935 թվական	Զաքիյան փող. 8	<a href="#">1.6/27</a>	ճարտ.՝ Բ. Արազյան
Բնակելի տուն	1948 թվական	Զաքիյան փող. 10	<a href="#">1.6/28</a>	ճարտ.՝ Բ. Արազյան
Բնակելի տուն	18-րդ դար	Թախրովի փող. 31	<a href="#">1.6/29</a>	
Բնակելի տուն	1950-ական թվականներ	Թումանյան փող. 35	<a href="#">1.6/30</a>	ճարտ.՝ Կ. Հակոբյան
Բնակելի տուն Աֆրիկյանների (ամառանոց)	20-րդ դարի սկիզբ	Ծովակալ Իսակովի պող. 3	<a href="#">1.6/32</a>	
Գինու մառան	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ		<a href="#">1.6/32.1</a>	
Խաչքար Սուքիասի	1586 թվական		<a href="#">1.6/32.1.1</a>	Խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի կոլեկցիոն գինիների մառանում
Բնակելի տուն	19-րդ դարի սկիզբ	Հանրապետության փող. 2 նրբ. 19	<a href="#">1.6/33</a>	
<a href="#">Բնակելի տուն Սինթետիկ կաուչուկի գործարանի</a>	1934-1938 թվականներ	Հանրապետության փող. 62	<a href="#">1.6/34</a>	ճարտ.՝ Տ. Երկանյան, պատվիրատու՝ Սինթետիկ կաուչուկի գործարան
Բնակելի տուն Վահան Պապոյանի	19-րդ դարի վերջ	Մայիսյան փող. 22	<a href="#">1.6/35</a>	
Բնակելի տուն		Մարշալ	<a href="#">1.6/36</a>	ճարտ.՝ Գ. Աղաբաբյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
		Բաղրամյան պող. 2		
Բնակելի տուն		Մարշալ Բաղրամյան պող. 7	<a href="#">1.6/37</a>	
Բնակելի տուն	1960 թվական	Մարշալ Բաղրամյան պող. 22ա	<a href="#">1.6/38</a>	
Հուշակոթող Վիկտոր Համբարձումյանին	1996 թվական		<a href="#">1.6/38.1</a>	բնակելի տան առջև
Բնակելի տուն	1939 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 9	<a href="#">1.6/39</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Մ. Գրիգորյան
Հուշակոթող՝ Հայկ Գյուլիքնիսյանին	1975 թվական		<a href="#">1.6/39.1</a>	շենքի առջև
Հուշակոթող՝ Ստեփան Մալխասյանցին	1974 թվական		<a href="#">1.6/39.2</a>	շենքի առջև, ճարտ.՝ Ռ. Ջուլիակյան, քանդակ՝ Ն. Նիկողոսյան
Բնակելի տուն	1929 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 27	<a href="#">1.6/40</a>	ճարտ.՝ Ֆ. Աղալյան
Բնակելի տուն	1941 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 39	<a href="#">1.6/41</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Ա. Նուշիկյան
<a href="#">Տուն-թանգարան Երվանդ Քոչարի</a>	1984 թվական		<a href="#">1.6/41.1</a>	շենքի 1-ին հարկում
Բնակելի տուն «Բլիշ»	1932 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 42 (Թումանյան փող. 29)	<a href="#">1.6/42</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան
Բնակելի տուն «Դերասանների»	1941 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 48	<a href="#">1.6/43</a>	ճարտ.՝ Մ. Գրիգորյան
Բնակելի տուն	1957 թվական	Մոսկովյան փող. 8	<a href="#">1.6/44</a>	ճարտ.՝ Տ. Մարության
Բնակելի տուն	1957 թվական	Մոսկովյան փող. 31	<a href="#">1.6/45</a>	ճարտ.՝ Գ. Թամանյան
Բնակելի տուն	1925-1927 թվականներ	Նալբանդյան փող. 21	<a href="#">1.6/46</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան
Հուշակոթող՝ Ալեքսանդր Սպենդիարյանի	1979 թվական	Նալբանդյան փող. 21	<a href="#">1.6/46.1</a>	շենքի բակում, ճարտ.՝ Ս. Քյուրքչյան
Տուն-թանգարան Ալեքսանդր Սպենդիարյանի	1967 թվական	Նալբանդյան փող. 21	<a href="#">1.6/46.2</a>	շենքի 2-րդ հարկում
Բնակելի տուն	1925-1927 թվականներ	Նալբանդյան փող. 23	<a href="#">1.6/47</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան
Բնակելի տուն	1938 թվական	Նալբանդյան փող. 37	<a href="#">1.6/48</a>	ճարտ.՝ Գ. Քոչար, Ռ. Իսրայելյան
Բնակելի տուն	1927 թվական	Նալբանդյան փող. 41	<a href="#">1.6/49</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
Բնակելի տուն Գ. Բոգոլյուբսկու	20-րդ դարի սկիզբ	Նալբանդյան փող. 46	<a href="#">1.6/50</a>	
Բնակելի տուն Անասնաբուժական - անասնաբուժական ինստիտուտի դասավանդողների	1931 թվական	Նալբանդյան փող. 47	<a href="#">1.6/51</a>	ճարտ.՝ Ա. Ահարոնյան, Հ. Մարգարյան
Բնակելի տուն	1927 թվական	Նալբանդյան փող. 96	<a href="#">1.6/52</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան
Հուշակոթող՝ Ակսել Բակունցի	1970 թվական		<a href="#">1.6/52.1</a>	շենքի մոտ, ճարտ.՝ Օ. Շոկարև, քանդակ՝ Է. Աղայան
<a href="#">Բնակելի տուն ԵՐԶԵԿ-ի</a> («Շախմատային»)	1932 թվական	Պարոնյան փող. 7	<a href="#">1.6/53</a>	ճարտ.՝ Կ. Հալաբյան, Մ. Մազմանյան, վրկո՝ 1970 թվական, ճարտ.՝ Հ. Թելումյան
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ	Պարոնյան փող. 3-րդ նրբ 16	<a href="#">1.6/54</a>	
Բնակելի տուն	19-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ	Պարոնյան փող. 3-րդ նրբ 18	<a href="#">1.6/55</a>	
Բնակելի տուն	1927 թվական	Պուշկինի փող. 25	<a href="#">1.6/56</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան
Բնակելի տուն	1951 թվական	Սայաթ-Նովա պող. 3-7	<a href="#">1.6/57</a>	ճարտ.՝ Զ. Բախշինյան
Բնակելի տուն	1928 թվական	Սայաթ-Նովա պող. 25	<a href="#">1.6/58</a>	ճարտ.՝ Ն. Բակ
Բնակելի տուն	1933 թվական	Վարդանանց փող. 7	<a href="#">1.6/59</a>	ճարտ.՝ Ն. Բակ
Բնակելի տուն «Մասնագետների»	1937 թվական	Տերյան փող. 62 (Մոսկովյան փող. 21)	<a href="#">1.6/60</a>	ճարտ.՝ Մ. Գրիգորյան
Հուշակոթող՝ Մանուկ Աբեղյանի	1965 թվական		<a href="#">1.6/60.1</a>	ճարտ.՝ Ռ. Զուլհալյան
Հուշակոթող՝ Հակոբ Մանանդյանի	1965 թվական		<a href="#">1.6/60.2</a>	ճարտ.՝ Ռ. Հասրաթյան
Բնակելի տուն Ս. Մարգարյանի	19-րդ դարի վերջ	Տերյան փող. 71	<a href="#">1.6/61</a>	1920-ական թվականներ՝ հիվանդանոցի շենք, վրկո՝ 1930-ական թվականներ
Բնակելի տուն	1952 թվական	Տիգրան Մեծի պող. 27	<a href="#">1.6/62</a>	ճարտ.՝ Հ. Հակոբյան
Գերեզման Սիմոն Զաքիյանի	1957 թվական	Մովսես Խորենացու, Գրիգոր Լուսավորչի և Զաքիյան փող. միջև, Մանկական	<a href="#">1.6/63</a>	քանդակ՝ Ա. Հարությունյան, ճարտ.՝ Ս. Ներսիսյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
		զբոսայգում		
Գերեզման Մայիսյան ապստամբության հերոսների (Ստեփան Ալավերդյան, Մարգիս Մուսայելյան, Բագրատ Ղարիբջանյան)	1921 թվական	Մովսես Խորենացու և Գրիգոր Լուսավորչի փող. միջև, Թատերական զբոսայգում	<a href="#">1.6/64</a>	ճարտ.՝ <a href="#">Ռուբեն Ջուլիսկյան</a>
Գերեզման Լիպարիտ Միսյանի	1921 թվական, 1971 թվական	Մովսես Խորենացու և Գրիգոր Լուսավորչի փող. միջև, Թատերական զբոսայգում	<a href="#">1.6/65</a>	քանդակ՝ Հ. Հովհաննիսյան
<a href="#">Գրադարանի շենք. Ազգային գրադարանի գլխավոր մասնաշենքը</a>	1928-1940 թվականներ	Տերյան փող. 72	<a href="#">1.6/66</a>	ճարտ.՝ <a href="#">Ալ. Թամանյան</a>
Գրքի պալատի շենքի Տերյան փող. հատվածը	1940 թվական, 1960 թվական	Տերյան փող. 91, Իսահակյան փող. 28, Գ. Քոչարի փող. 4	<a href="#">1.6/67</a>	ճարտ.՝ Ս. Մազմանյան, Հ. Մարգարյան, Ս. Ներսիսյան, 1967 թվականից այս շենքում է գործում Երևանի դրամատիկական թատրոնը
Հուշարձան «Բանվոր և կոլտնտեսական»	1956 թվական		<a href="#">1.6/67.1</a>	քանդակ՝ Ե. Քոչար, Գրքի պալատի բակում
<a href="#">Հուշարձան՝ Հակոբ Մեղապարտի</a>	1987 թվական		<a href="#">1.6/67.2</a>	շենքի առջև՝ Իսահակյան փող. կողմից, քանդակ՝ Խ. Իսկանդարյան, ճարտ.՝ Մ. Ավագյան
Դամբարան	1319 թվական	Աբովյան փող. 3	<a href="#">1.6/68</a>	քարգործ վարպետ՝ Շահիկ
Դպրոցի շենք. Հրաչյա Աճառյանի անվան դպրոցը	1937-1938 թվականներ	Կոբյուռի փող. 2ա	<a href="#">1.6/69</a>	ճարտ.՝ Մ. Գրիգորյան
Հուշարձան Հրաչյա Աճառյանի	1970 թվական		<a href="#">1.6/69.1</a>	դպրոցի առջև, քանդակ՝ Ռ. Եկմալյան, Հ. Հովհաննիսյան
Դպրոցի շենք. Ստեփան Շահումյանի անվան դպրոցը	1928 թվական 1932 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 33	<a href="#">1.6/70</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան
<a href="#">Հուշարձան Ստեփան Շահումյանի</a>	1957 թվական		<a href="#">1.6/70.1</a>	դպրոցի առջև, ճարտ.՝ Ջ. Թորոսյան, քանդակ՝ Ս. Բաղդասարյան
Դպրոցի շենք. Եղիշե Չարեցի անվան դպրոցը	1952 թվական	Ամիրյան փող. 9	<a href="#">1.6/71</a>	ճարտ.՝ Գ. Աղաբաբյան
<a href="#">Հուշարձան՝ Եղիշե Չարեցի</a>	1957 թվական		<a href="#">1.6/71.1</a>	դպրոցի առջև, քանդակ՝ Ղ. Չուբարյան
<a href="#">Եկեղեցական համալիր</a>	17-19-րդ	Ղ. Փարպեցու փող.	<a href="#">1.6/72</a>	վրկո՝ 1978-1980

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
<a href="#">Զորավոր Սբ. Աստվածածին</a>	դարեր	Զբ		թվականներ, <a href="#">Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն 1-ինի</a> կողմից
Եկեղեցի Զորավոր Սբ. Աստվածածին	1693 թվական		<a href="#">1.6/72.1</a>	
Խաչքար Էլիզաբի	17-րդ դար		<a href="#">1.6/72.1.1</a>	առ ճակատին
Խաչքար Մովսեսի	17-րդ դար		<a href="#">1.6/72.1.2</a>	առ ճակատին
Խաչքար Խոջա Փանոսի	1693 թվական		<a href="#">1.6/72.1.3</a>	առ ճակատին
Խաչքար Հովհաննեսի	1693 թվական		<a href="#">1.6/72.1.4</a>	առ ճակատին
Խաչքար Հուրիխանի	1693 թվական		<a href="#">1.6/72.1.5</a>	առ ճակատին
Գավիթ	1693 թվական		<a href="#">1.6/72.2</a>	կից է եկղ-ցուն ամ-ից
Խաչքար	15-րդ դար		<a href="#">1.6/72.2.1</a>	եկղ-ցու ամ ճակատին
Խաչքար	15-րդ դար		<a href="#">1.6/72.2.2</a>	կազմող՝ Հովհաննես, եկղ-ցու ամ ճակատին
Գերեզմանոց	19-րդ դար		<a href="#">1.6/72.3</a>	եկղ-ցու հվ կողմում
Դարպաս	17-19-րդ դարեր		<a href="#">1.6/72.4</a>	եկեղեցու հվ-ամ կողմում
Մատուռ Անանիա Առաքյալի (զանգակատուն)	1889 թվական		<a href="#">1.6/72.5</a>	եկղ-ցու ամ կողմում
<a href="#">Եկեղեցի Սբ. Աստվածածին (Կաթողիկե)</a>	13-րդ դար	Աբովյան փող. 15	<a href="#">1.6/73</a>	ՀՀ ԳԱԱ Լեզվի ինստիտուտի բակում
Խաչքար	15-րդ դար		<a href="#">1.6/73.1</a>	հենած եկղ-ցու ամ ճակատին
Խաչքար Գրիգորի Անանի	17-րդ դար		<a href="#">1.6/73.2</a>	եկղ-ցու բակում
Խաչքար Մելիք Աղամալի	1693 թվական		<a href="#">1.6/73.3</a>	եկղ-ցու բակում, պահպանված է ստորին մասը
Խաչքար Նիկողոսի	1694 թվական		<a href="#">1.6/73.4</a>	եկղ-ցու բակում
Որմնանկար «Աստվածամայրը մանկան հետ»	18-19-րդ դարեր		<a href="#">1.6/73.5</a>	եկղ-ցու ամ մուտքի բարավորի ստորին մասում
Որմնանկար «Ավետում»	18-19-րդ դարեր		<a href="#">1.6/73.6</a>	եկղ-ցու ամ մուտքի բարավորի վերին մասում
<a href="#">Եկեղեցի Կոնստանտին Սբ. Հովհաննես Մկրտիչ</a>	1706-1710 թվականներ	Հովհաննես Կոզեռնի փող. 9	<a href="#">1.6/74</a>	
Խաչքար	18-րդ դար		<a href="#">1.6/74.1</a>	հվ ճակատին, արձանագիր, եղծված
Խաչքար	18-րդ դար		<a href="#">1.6/74.2</a>	հվ ճակատին, արձանագիր, եղծված
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.3</a>	հվ ճակատին
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.4</a>	առ ճակատին, արձանագիր
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.5</a>	ամ ճակատին,

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
				արձանագիր
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.6</a>	ամ ճակատին, արձանագիր
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.7</a>	ամ ճակատին
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.8</a>	ամ մուտքի բարավորին
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.9</a>	ամ մուտքի բարավորին
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.1</a>	ամ մուտքի բարավորին
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.11</a>	հս մուտքից ձախ
Խաչքար	18 դար		<a href="#">1.6/74.12</a>	հս մուտքից ձախ
Խաչքար Աղավելի	18 դար		<a href="#">1.6/74.13</a>	ամ ճակատին
Խաչքար Աղեքսանդրի	18 դար		<a href="#">1.6/74.14</a>	հվ ճակատին
Խաչքար Անդրեասի, Արիստակեսի և Փարու	18 դար		<a href="#">1.6/74.15</a>	աե ճակատին
Խաչքար Գիրիսասի	1710 թվական		<a href="#">1.6/74.16</a>	հվ ճակատին
Խաչքար Գրիգորի, Մկրտումի, Մալխասի	18 դար		<a href="#">1.6/74.17</a>	ամ ճակատին
Խաչքար Խանումի	18 դար		<a href="#">1.6/74.18</a>	աե ճակատին
Խաչքար Մարգարի և այլոց	18 դար		<a href="#">1.6/74.19</a>	հվ ճակատին
Խաչքար Մարկոսի	18 դար		<a href="#">1.6/74.2</a>	աե ճակատին
Խաչքար Մելիք Նազի և ծնողների	18 դար		<a href="#">1.6/74.21</a>	ամ ճակատին
Խաչքար Նիկողոսի, Լելու	18 դար		<a href="#">1.6/74.22</a>	աե ճակատին
Խաչքար Սատաթի, Խանբեկու	18 դար		<a href="#">1.6/74.23</a>	աե ճակատին
Խաչքար Սպահանցի Խաչատուրի	18 դար		<a href="#">1.6/74.24</a>	ամ ճակատին
Խաչքար Սպահանցի Խաչատուրի և ծնողների՝ Ղազարի, Տիխանի	18 դար		<a href="#">1.6/74.25</a>	ամ ճակատին
Դարպաս	1863 թվական		<a href="#">1.6/74.26</a>	
<a href="#">Եկեղեցի Սբ. Սարգիս</a>	1842 թվական,	Բարայեյան փող. 19	<a href="#">1.6/75</a>	վրկո՝ 1970 թվական, վրկո ճարտ.՝ Ռ. Բարայեյան, Ա. Գալիկյան, քանդակ՝ Ա. Հովսեփյան, կոնստ.՝ Ռ. Մանուկյան
Զանգակատուն	1998 թվական		<a href="#">1.6/75.1</a>	ճարտ.՝ Ռ. Զուլհալյան
Խաչքար	1511 թվական		<a href="#">1.6/75.2</a>	Առաջնորդարանի շենքի բակի հվ մասում, աղբյուրի մոտ, բերված՝ Սևանի վանքից
Խաչքար	16 դար		<a href="#">1.6/75.3</a>	Առաջնորդարանի շենքի բակի հվ մասում, աղբյուրի մոտ, բերված՝ Սևանի



հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
				վանքից
Խաչքար	16 դար		<a href="#">1.6/75.4</a>	Առաջնորդարանի շենքի բակի հվ մասում, բերված՝ Սևանի վանքից
Խաչքար	16 դար		<a href="#">1.6/75.5</a>	Եկղ-ցու առե պատի տակ, կազմող՝ Հակոբ
Տապանաքար	16 դար		<a href="#">1.6/75.6</a>	Եկղ-ցու բակում, բեկորված, բեկորները աղբյուրից հս և հվ
Տապանաքար	16 դար		<a href="#">1.6/75.7</a>	Եկղ-ցու բակում, աղբյուրի մոտ
Տապանաքար Պարոն Մարգարի	1583 թվական		<a href="#">1.6/75.8</a>	Եկղ-ցու բակում
Տապանաքար Զուղայեցի Տիրացու Պետրոսի	1624 թվական		<a href="#">1.6/75.9</a>	Եկղ-ցու բակում, աղբյուրի մոտ
Զորանոցային համալիր Երևանի բերդի	1582 թվական– 20 դար սկզբ	Հրազդանի ձախ ափին	<a href="#">1.6/76</a>	
Պարիսպ	16-17 դարեր	Երևանի բերդի տարածքում, Հրազդան գետի ձախ ափին	<a href="#">1.6/76.1</a>	պահպանվել է մաս առ հատվածից
Թանգարան. <a href="#">Ժողովրդական ստեղծագործության պետական թանգարանը (Ժողովրդական ստեղծագործության տուն)</a>	1941 թվական	Աբովյան փող. 64	<a href="#">1.6/77</a>	ճարտ.՝ Վ. Արևշատյան, 1978 թ-ից՝ Ժող. ստեղծագործության պետ. թանգարան
<a href="#">Թատրոնի շենք. Գաբրիել Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնը</a>	1966 թվական	Գր. Լուսավորչի փող. 6	<a href="#">1.6/78</a>	ճարտ.՝ Ռ. Ալավերդյան, Ս. Բուրխաջյան, Գ. Մնացականյան, կոնստ՝ Ռ. Բադալյան 1970 թվական ՀԽՍՀ Պետմրցանակ
Բարձրաքանդակներ	1966 թվական		<a href="#">1.6/78.1</a>	քանդակ՝ Ա. Հարությունյան, թատրոնի շքամուտքին
<a href="#">Բարձրաքանդակ «Հուշկապարիկ»</a>	1976 թվական		<a href="#">1.6/78.2</a>	քանդակ՝ Ա. Հարությունյան, թատրոնի շքամուտքի մոտ
<a href="#">Հուշարձան Գաբրիել Սունդուկյանի</a>	1972 թվական		<a href="#">1.6/78.3</a>	քանդակ՝ Ա. Հարությունյան, թատրոնի շքամուտքի մոտ
Պաննո «Հայաստան»	1965 թվական		<a href="#">1.6/78.4</a>	նկ.՝ Մ. Սարյան, Հ. Սիրադյան, թատրոնի ճեմասրահում
Ինստիտուտի շենք. Անասնաբուժական -	1928 թվական	Նալբանդյան փող. 128	<a href="#">1.6/79</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
անասնաբուժական ինստիտուտը				
Ինստիտուտի շենք. Մարքսիզմ - լենինիզմի հայկական ինստիտուտը	1949 թվական	Մարշալ Բաղրամյան պող. 12	<a href="#">1.6/80</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան, այժմ ՉԺՀ դեսպանատան շենք
<a href="#">Ինստիտուտի շենք. Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը (մատենադարան)</a>	1957 թվական	Մեսրոպ Մաշտոցի պող. 53	<a href="#">1.6/81</a>	ճարտ.՝ Մ. Գրիգորյան
Խճանկար «Ավարայրի ճակատամարտ» («Վարդանանք»)	1960 թվական		<a href="#">1.6/81.1</a>	նկ՝ Վ. Խաչատրյան, շենքի ներսում
Որմնանկարներ «Հայ մշակույթի պատմություն»	1959 թվական		<a href="#">1.6/81.2</a>	նկ՝ Վ. Խաչատրյան, շենքի ներսում
<a href="#">Հուշարձան Անանիա Շիրակացու</a>	1963 թվական		<a href="#">1.6/81.3</a>	քանդակ՝ Գ. Բադալյան
<a href="#">Հուշարձան Գրիգոր Տաթևացու</a>	1967 թվական		<a href="#">1.6/81.4</a>	քանդակ՝ Ա. Գրիգորյան
<a href="#">Հուշարձան Թորոս Ռոսլինի</a>	1967 թվական		<a href="#">1.6/81.5</a>	քանդակ՝ Ա. Շահինյան
<a href="#">Հուշարձան Մեսրոպ Մաշտոցի</a>	1962 թվական		<a href="#">1.6/81.6</a>	քանդակ՝ Ղ. Չուբարյան
<a href="#">Հուշարձան Մխիթար Գոշի</a>	1967 թվական		<a href="#">1.6/81.7</a>	քանդակ՝ Ղ. Չուբարյան
<a href="#">Հուշարձան Մովսես Խորենացու</a>	1964 թվական		<a href="#">1.6/81.8</a>	քանդակ՝ Ե. Վարդանյան
<a href="#">Հուշարձան Ֆրիկի</a>	1967 թվական		<a href="#">1.6/81.9</a>	քանդակ՝ Ս. Նազարյան
Բացօթյա ցուցադրություն	մ.թ.ա. 2-1 հզ, 14-17 դարեր		<a href="#">1.6/81.10</a>	կազմակերպվել է 1970- ական թվականներ, շենքի աջակողմյան և ձախակողմյան կամարակապ սրահներում
Կոթող «Դուռ»	մ.թ.ա. 7 դար		<a href="#">1.6/81.10.1</a>	բերված Կարմիր բլուրից
Խաչքար	1294 թվական		<a href="#">1.6/81.10.2</a>	բեկոր, արձանագիր, ցուցադրության շարքում, բերված Արցախի <a href="#">Մարտակերտի շրջանից</a>
Խաչքար Խաչատուրի	1545 թվական		<a href="#">1.6/81.10.3</a>	կազմող՝ Վարդան
Խաչքար Հախնազար Աղայի	1596 թվական		<a href="#">1.6/81.10.4</a>	կազմող՝ Քիրամ
Խաչքար Մարիանի	1604 թվական		<a href="#">1.6/81.10.5</a>	կազմող՝ Քիրամ
Տապանաքար	17 դար		<a href="#">1.6/81.10.6</a>	բերված <a href="#">Նորատուսի պատմական գերեզմանոցից</a>
Վիշապաքար	մ.թ.ա. 2-1 հզ		<a href="#">1.6/81.10.7</a>	

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
<a href="#">[[Մանկաբարձության և գինեկոլոգիայի ինստիտուտ]]</a> Ծննդատան շենք. Պարթև Մարգարյանի անվան Մոր և մանկան առողջության պահպանման հայկական գիտահետազոտական կենտրոնը]]	1931 թվական. 1936-1939 թվականներ	Մեսրոպ մաշտոցի պող. 22	<a href="#">1.6/82</a>	1-ին հարկը կառուցվել է Կառավարական 1-ին տան համար, ճարտ.՝ Մ. Գրիգորյան, Ն. Բունիաթյան
Կամուրջ «Երևան-Սևան» երկաթուղու	1935 թվական	Մյասնիկյան պող. - Մ. Հերացու փող. հատման մասում	<a href="#">1.6/83</a>	հին Նորք տանող խճուղու վրա
<a href="#">Կամուրջ «Կարմիր» (Հրազդանի հին կամուրջ), (խոջա Փլավի)</a>	1679 թվական	Հրազդան գետի վրա	<a href="#">1.6/84</a>	«Արարատ» գինու կոմբինատի համալիրի դիմաց, վրկո՝ 1830 թվական, 1851 թվական
<a href="#">Կամուրջ «Հաղթանակի»</a>	1939-1961 թվականներ	Հրազդան գետի վրա	<a href="#">1.6/85</a>	ճարտ.՝ Ա. Մամիջանյան, Ա. Ասատրյան, Ս. Սաֆարյան, Գ. Աղաբաբյան, քանդակ՝ Ս. Սարգսյան, կոնստ՝ Ա. Հովնանյան, միացնում է Մեսրոպ Մաշտոցի և Ծովակալ Իսակովի պողոտաները
Կամուրջ Նորքի (Գետառի)	1664 թվական	Մյասնիկյան պող.	<a href="#">1.6/86</a>	ճարտ.՝ Գրիգորի որդի Կիրակոս, պատվիրատու՝ Նորքեցի Հովհաննես վարդապետ, վրկոճ՝ 1924 թվական, 1965-1968 թվականներ
Կայան Տրանսֆորմատորային	1930 թվական	Հանրապետության և Ստ. Շահումյանի անվ. հրապարակների միջև, Ստ. Շահումյանի անվ. զբոսայգում	<a href="#">1.6/87</a>	ճարտ.՝ Ն. Բունիաթյան, զբոսայգու հվ-ան եզրին
<a href="#">Համալսարանի համակառույց. Երևանի ճարտարագիտական և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանները</a>	1932-1964 թվականներ	Տերյան փող. 105	<a href="#">1.6/88</a>	հիմնադրվել է 1930 թվական որպես Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ
Մասնաշենք՝ առաջին	1932 թվական, 1935 թվական		<a href="#">1.6/88.1</a>	այժմ՝ Քիմիական ֆակուլտետի մասնաշենք, ճարտ.՝ Ա. Թամանյան
Մասնաշենք՝ երկրորդ	1935 թվական		<a href="#">1.6/88.2</a>	այժմ՝ Երևանի ճարտարապետա-

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
				շինարարական ինստիտուտի շենք, ճարտ.՝ Ա. Թամանյան
Մասնաշենք՝ երրորդ (գլխավոր)	1955 թվական, 1959 թ., . 1964 թվական		<a href="#">1.6/88.3</a>	ճարտ.՝ Ա. Մամիջանյան
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված պոլիտեխնիկականներին	1981 թվական		<a href="#">1.6/88.4</a>	ճարտ.՝ Ա. Մխիթարյան
<a href="#">Համալսարանի համակառույց, Երևանի Մխիթար Հեքազու անվան բժշկական համալսարանը</a>	1927-1955 թվականներ	Կորյունի փող. 2	<a href="#">1.6/89</a>	նախկինում՝ Երևանի բժշկական ինստիտուտ, ճարտ.՝ Ա. Թամանյան
Անատոմիկումի շենք	1927 թվական		<a href="#">1.6/89.1</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան
Մասնաշենք գլխավոր	1938 թվական, 1950-ական թվականներ		<a href="#">1.6/89.2</a>	ճարտ.՝ Ս. Սաֆարյան
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհված բժշկական ինստիտուտցիներին	1972 թվական		<a href="#">1.6/89.3</a>	քանդակ՝ <a href="#">Ռուզան Քյուրքյան</a> , ճարտ.՝ <a href="#">Ստեփան Քյուրքյան</a>
<a href="#">Համալսարանի շենք, Երևանի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքը</a>	1965 թվական	Ալեք Մանուկյան փող. 1	<a href="#">1.6/90</a>	ճարտ.՝ Է. Տիգրանյան
Ժայռապատկերներ	մ.թ.ա. 5-3 հզ		<a href="#">1.6/90.1</a>	համալսարանի բակում
Խաչքար՝ Արցախում զոհված մտավորականներին և ԵՊՀ ուսանող- ազատամարտիկներին	1996 թվական		<a href="#">1.6/90.3</a>	Բանասիրական ֆակուլտետի մասնաշենքի առջև, քանդակ՝ Ժ. Սուքիասյան
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհված համալսարանականներին	1979 թվական		<a href="#">1.6/90.4</a>	ճարտ.՝ Ռ. Ջուլիսկյան
Հուշարձան՝ Մովսես Խորենացու	1996 թվական		<a href="#">1.6/90.5</a>	համալսարանի բակում, քանդակ՝ Ա. Պողոսյան
Հանդիսատեսային շենք. Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը	1977 թվական	Բսահակյան փող. 1	<a href="#">1.6/91</a>	ճարտ.՝ Ս. Քյուրքյան
Բարձրաքանդակներ	1977 թվական		<a href="#">1.6/91.1</a>	դահլիճում, ճարտ.՝ Ս. Քյուրքյան
Հանրակացարանի շենք Անասնաբուժական - անասնաբուժական ինստիտուտի	1930 թվական	Կորյունի փող. 15- 19	<a href="#">1.6/92</a>	ճարտ.՝ Գ. Քոչար

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	հավելյալ նշումներ
հանրակացարանը				
Հիդրոէլեկտրակայանի շենք. Երևանի առաջին ՀԷԿ-ը	1926 թվական	Հրազդանի ձախ ափին	<a href="#">1.6/93</a>	Ծիծեռնակաբերդի դիմաց, ճարտ.՝ Ա. Թամանյան
Հիվանդանոցային շենքերի համակառույց	1917-1960 թվականներ	Աբովյան փող. 54-60	<a href="#">1.6/94</a>	
Ինստիտուտի շենք. Ֆիզիոթերապիայի ինստիտուտը	1930 թվական, 1932 թվական, 1939 թվական	Աբովյան փող. 54	<a href="#">1.6/94.1</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան, Գ. Թամանյան
Հիվանդանոցի շենք. մանկաբարձության և գինեկոլոգիայի հիվանդանոցը	1929 թվական	Աբովյան փող. 56	<a href="#">1.6/94.2</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան
Ակնաբուժարանի շենք	1929 թվական	Աբովյան փող. 58	<a href="#">1.6/94.3</a>	ճարտ.՝ Լ. Մուրադյան
Հիվանդանոցի շենք. Քաղաքային հիվանդանոցը	1917-1922 թվականներ	Աբովյան փող. 58	<a href="#">1.6/94.4</a>	ճարտ.՝ Պ. Զուրաբյան, հիվանդանոցը հիմնադրվել է 1893 թվական
Հիվանդանոցի շենք. Մանկական հիվանդանոցը	1939 թվական, 1975 թվական	Աբովյան փող. 60	<a href="#">1.6/94.5</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան, Մ. Գրիգորյան
Հրապարակի համալիր. Ազատության հրապարակը	1924-1939 թվականներ	Թումանյան, Մեսրոպի Մաշտոց, Տերյան և Սայաթ - Նովա փողոցների տարածքում	<a href="#">1.6/95</a>	ճարտ.՝ Ա. Թամանյան
Գերեզման Ալեքսանդր Սպենդիարյանի	1928 թվական, 1966 թվական		<a href="#">1.6/95.1</a>	ճարտ.՝ Ռ. Մարտիրոսյան
Հուշարձան «Մուսա»	1963 թվական		<a href="#">1.6/95.1.1</a>	քանդակ՝ Ս. Բաղդասարյան
